ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի 19.02.2015 թ. նիստի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2015թ. փետրվարի 19-ին՝ ժամը 17:00-ին ՀՀ սահմանադրական դատարանի շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի տարիքով ավագ անդամ, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**:

Մասնակցում էին՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ՝ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ՝ Մարդու իրավունքների պաշտպան,

ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» հասարակական կազմակերպության նախագահ:

Որպես Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ներկայացուցիչ՝ նիստին մասնակցում էր և նիստն արձանագրում էր ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ **ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆԸ**:

Հանձնաժողովի նիստի քննարկմանն առաջարկվող օրակարգային հարցերը և վերաբերելի նյութերը նախապես ուղարկվել էին հանձնաժողովին:

Գ. Հարությունյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հետևյալ հարցերը.

1. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմից ստացված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթի հարցազրույցին մասնակցելու հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի լրիվությունը և համապատասխանությունը որոշելու և մրցույթի հարցազրույցի փուլ անցած անձանց ցուցակի հաստատման հարց,
2. հարցազրույցի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու հարց,
3. հարցազրույցի մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին տեղեկատվությունը պաշտոնական կայքերում հրապարակելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմին ուղարկելու հարց,

4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում ՀՀ կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթի հարցազրույցի փուլ անցած անձանց ցուցակի և հարցազրույցի անցկացման օրվա, ժամի և վայրի վերաբերյալ հայտարարության նախագծի հաստատման և դրա հրապարակման համար ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմին ներկայացնելու հարց:

Հանձնաժողովը հավանություն տվեց նիստի օրակարգին:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ 1-ին ՀԱՐՑ

Գ. Հարությունյանը առաջարկեց **Մ. Մինասյանին** Հանձնաժողովին ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթի հարցազրույցին (այսուհետ՝ Մրցույթ) մասնակցելու համար աշխատակազմ դիմում ներկայացրած անձանց ցանկը՝ ներկայացնելով նրանցից յուրաքանչյուրի մասնակցության հիմքերը, ինչպես նաև Մրցույթի մասնակցության համար հավակնորդների կողմից ներկայացված փաստաթղթերի լրիվության և համապատասխանության վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև վերջիններիս կողմից ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ հնարավոր վիճելի հարցերը, որոնց կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) հստակ կողմնորոշում չունի:

Մ. Մինասյանը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց այն անձանց ցանկը, որոնք Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի թիվ ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգի 13-րդ կետերով սահմանված ժամկետներում Աշխատակազմ Մրցույթին մասնակցելու դիմում են ներկայացրել՝ թվով 15 անձ:

Նշեց, որ դիմում ներկայացրած անձանցից 7-ը՝ Արմեն Շուրայի Հարությունյանը, Արայիկ Գառնիկի Ղազարյանը, Նելիկ Նիկողոսի Հարությունյանը, Վիգեն Վլադիմիրի Քոչարյանը, Լիզա Ռաֆիկի Գրիգորյանը, Վահե Միշայի Գրիգորյանը, Դավիթ Լևոնի Հակոբյանը, հանդիսանում են 02.09.2014թ.-ին հայտարարված մրցույթի հարցազրույցի փուլի ամփոփման արդյունքներով գնահատված թեկնածուներ:

Մնացած 8 դիմում ներկայացրած հավակնորդներն են՝ Ստեփան Կարոյի Միքայելյանը, Ելիզավետա Ռեմիկի Դանիելյանը, Աստղիկ Ֆրունզեի Խաառատյանը, Էդուարդ Աշոտի Մկրտչյանը, Հայկանուշ Հայկազի Պարսամյանը, Լիանա Օնիկի Հակոբյանը, Աննա Ռազմիկի Մարգարյանը և Արտյոմ Աշոտի Գեղամյանը:

Հավակնորդներից երեքի՝ Էդուարդ Աշոտի Մկրտչյանի, Հայկանուշ Հայկազի Պարսամյանի և Արտյոմ Աշոտի Գեղամյանի կողմից ներկայացված փաստաթղթերի կապակցությամբ կազմվել են արձանագրություններ:

Մ. Մինասյանը հանձնաժողովի քննարկմանը ներկայացրեց Էդուարդ Աշոտի Մկրտչյանի, Հայկանուշ Հայկազի Պարսամյանի և Արտյոմ Աշոտի Գեղամյանի ներկայացրած փաստաթղթերի վերաբերյալ կազմված արձանագրությունները:

Ուսումնասիրելով ներկայացված բոլոր փաստաթղթերը՝
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՈՐՈՇԵՑ.

հաստատել Մրցույթի հարցազրույցի փուլ անցած անձանց ցուցակը՝ 14 հոգու հետևյալ կազմով. Ստեփան Կարոյի Միքայելյան, Արմեն Շուրայի Հարությունյան, Ելիզավետա Ռեմիկի Դանիելյան, Աստղիկ Ֆրունզեի Խաառատյան, Արայիկ Գառնիկի Ղազարյան, Նելիկ Նիկողոսի Հարությունյան, Վիգեն Վլադիմիրի Քոչարյան, Լիզա Ռաֆիկի Գրիգորյան, Էդուարդ Աշոտի Մկրտչյան, Վահե Միշայի Գրիգորյան, Լիանա Օնիկի Հակոբյան, Աննա Ռազմիկի Մարգարյան, Դավիթ Լևոնի Հակոբյան և Արտյոմ Աշոտի Գեղամյան:

Հայկանուշ Հայկազի Պարսամյանին չընդգրկել Մրցույթի հարցազրույցի փուլ անցած անձանց ցուցակում, քանի որ հավակնորդի մոտ ակնհայտորեն բացակայում է Հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 1-Լ որոշմամբ սահմանված պահանջներին բավարարող՝ աշխատանքային, դասավանդման և մարդու իրավունքների պաշտպանության ասպարեզում մասնագիտական գործունեության փորձը, ինչպես նաև իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանը:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ 2-ՐԴ ՀԱՐՑ

Գ. Հարությունյանն առաջարկեց անդրադառնալ օրակարգի երկրորդ՝ հարցազրույցի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու հարցին և Հանձնաժողովի անդամների քննարկմանը ներկայացրեց Մրցույթի հարցազրույցի փուլը ՀՀ վճռաբեկ դատարանի շենքում 2015 թվականի փետրվարի 26-ից ժամը 09:00-ից սկսած անցկացնելու հարցը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՈՐՈՇԵՑ. որպես Մրցույթի հարցազրույցն անցկացնելու վայր սահմանել ՀՀ վճռաբեկ դատարանի շենքի գրադարանի դահլիճը, հաստատել Մրցույթի հարցազրույցի փուլի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2015 թվականի փետրվարի 26-ից՝ ժամը 09:00-ից սկսած:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՀԱՐՑԵՐ

Գ. Հարությունյանն առաջարկեց քննարկել օրակարգի երրորդ և չորրորդ՝ հարցազրույցի մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին տեղեկատվությունը պաշտոնական կայքերում հրապարակելու նպատակով ներկայացված հայտարարության նախագծի

հաստատման և վերջինս ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմին ուղարկելու հարցը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՈՐՈՇԵՑ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում ՀՀ կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթի հարցազրույցի փուլ անցած անձանց ցուցակի և հարցազրույցի անցկացման օրվա, ժամի և վայրի վերաբերյալ հայտարարության նախագծին:

Արդյունքում Հանձնաժողովի նիստը վարողը, օրակարգային բոլոր հարցերը համարելով սպառված, հայտարարեց Հանձնաժողովի նիստը ավարտված:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Արձանագրող՝ Միքայել Մինասյան